№ 18 ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 30 **1899** ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐԻ 30 № 18

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվան 6 րուբ. Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ". Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօնի օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յարմար առիթ է.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Ֆերգանեան չրջանը. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատգամաւոր Մունկելի ճառը. Նամակ Թիւրքիայից. Նամակ Գարսկաստանից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խաբրիկ մը չունիս:

ՅԱՐՄԱՐ ԱՌԻԹ Է

—

Պարիզի համաշխարհային ցուցահանդէսին մասնակցել ցանկացող կովկասցիները ստացան մեծ դիւրութիւն: Կովկասեան կառավարչապետի դիւանատանը կազմվել են երեք յատուկ մասնաժողովներ, որոնք պէտք է մշակեն ծրագիր, թէ ի՞նչպէս կարող է Կովկասը նպատակայարմար կերպով մասնակցել այդ նշանաւոր ցուցահանդէսին: Մասնաժողովները վերաբերում են մեր երկրի արդիւնաբերութեան երեք գլխաւոր ճիւղերին, այն է գիւղատնտեսութեան, արհեստագործութեան և հանքահանութեան: Երեք ճիւղերումն էլ մեր երկիրը վերջին տարիների ընթացքում կարողացել է հանդէս հանել այնպիսի արդիւնքներ, որոնք ունեն նշանակութիւն Կովկասից դուրս գտնվող վաճառանոցի համար: Այդպէս, օրինակ, գիւղատնտեսութեան այնպիսի առարկաներ, ինչպէս են շերամ, ծխախոտ, բամբակ, գինի՝ մուտք են գործել Ռուսաստանի և նոյն իսկ արտասահմանեան վաճառանոցը: Հանքաբանութեան այնպիսի արդիւնքներ, ինչպէս են նշանաւոր նաւթը, պղինձը, մարգանեցը և այլն արդէն գրաւել են հեռաւոր կապիտալիստների ուշադրութիւնը: Նոյն իսկ արհեստագործութեան ճիւղի մէջ, որ թոյլ զարգացումն ունի մեր երկրում, մենք արտահանում ենք մետաղեայ և բրդեայ զանազան արդիւնքներ, արծաթագործների նուրբ կերտուածքներ, մետաքսի գործուածքներ շալեր և այլն:

Մեր արդիւնագործութեան նուիրված անձինք պէտք է աչքից բաց չը թողնեն մի այնպիսի նշանաւոր դէպք, ինչպէս է Պարիզի ընդարձակ ցուցահանդէսը, որ պէտք է լինի ամենամեծը մինչև այժմ եղածներից և որը մտադիր է իր մէջ պատկերացնել համաշխարհային արդիւնագործութեան ներկայ վիճակը իր բոլոր առաջադիմութիւններով և կատարելագործութիւններով: Մանաւանդ այդ կարևոր է ներկայ մեր պայմանների մէջ, երբ մեր երկիրը մտնում է համաշխարհային շփման ամենասերտ շրջանի մէջ, երբ երկաթուղիներ և շոգենաւեր միացնում են մեզ հեռաւոր աշխարհների հետ, երբ օտար կապիտալիստները հետաքրքրվում են մեր երկրի արդիւնաբերական կեանքով:

Յիշած մասնաժողովների նախագահներ են նշանակված հեղինակաւոր անձինք. գիւղատնտեսական մասնաժողովում՝ երկրագործութեան մինիստրի Կովկասեան լիազօր Ն. Մեդվեդև, արհեստագործութեան մասնաժողովում, որի մէջ մտնում են գործարանական և տնայնագործական արդիւնքներ, ֆինանսների մինիստրութեան ներկայացուցիչ սուլթան Կրիմ-Գիրէյ, իսկ հանքաբանութեան մասնաժողովում՝ Կովկասի լեռնային վարչութեան կառավարիչ Կոստակ: Բազմաթիւ մասնագէտներ, որոնք գտնվում են այդ անձանց դիւանատներում, կարողութիւն կը տան կազմել մեր երկրի արդիւնաբերական ամփոփ նկարագրութիւնը և ներկայացնել ցուցահանդէսին: Ցանկալի է, որ մեր արդիւնագործութեան ներկայացուցիչները թողնէին անհոգ և անտարբեր վերաբերմունքը դէպի ներկայ դէպքը և մասնակցէին Պարիզի ցուցահանդէսին իրանց գործի մէջ արած առաջադիմութեամբ: Դա օգուտ է թէ իրանց և թէ մեր երկրին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Լինել միլիօնատէր և ողորմելի խնայողութիւններ անել—դա դեռ ներելի է ասիացի կամ նոյն իսկ եւրոպացի հարուստին, երբ այդ ժլատութիւնը ոչ ոքին չէ վնասում: Բայց ի՞նչ կասէք, երբ փողի տոպրակը իր անկշտութեան զոհ է դարձնում մարդկանց, խեղճ արհեստաւորներին, մշակներին, որոնք մեծ-մեծ ընտանիքներ ունեն: Բագուն այդպիսի անգթութիւնների հայրենիքն է: Եւ ահա տեղական կրեսոսներից մէկը, Մուսա Նաղիեվ, յունվարի 25-ին նստեց տեղական Նահանգական դատարանում մեղադրվողների նստարանի վրա: Մեղադրվում էր նա այն պատճառով, որ հին, անպէտք երկաթից կառուցել էր մի ահագին ամբար, որը, երբ լցրեցին ջրով, չը կարողացաւ դիմանալ ահագին ծանրութեան ու պատռվեց: Ծանրութիւնից քանդվեցին և հարևան ամբարները, որոնք լցված էին նաւթով. Ջրի և նաւթի հեղեղ գոյացաւ, որ քանդեց պատը և թափվեց հարևան գործարանի բակը, ուր բռնկվեց: Հետևանքը—երեք օր չարունակվող հրդեհ մարդկային զոհերով. Պետրոս Բուդաղեանց այրվեց կրակի մէջ, Ա. Ասլանեանց մեռաւ ստացած վէրքերից. երկու արհեստաւորներ ծանր վէրքեր ստացան, որոնցից մէկը աշխատանքի անընդունակ դարձաւ, իսկ հինգ հոգու ստացած վէրքերը թեթև են: «Новое Обозрѣніе» լրագրի թղթակիցը հաղորդում է, որ դատարանում ապացուցվեց այն փաստը, որ կարգադրութիւններ անողը Մուսա Նաղիևն էր: Եւ դատարանը, մեղաւոր համարելով նրան, երեք ամսվայ բանտարկութեան դատապարտեց:

Փաստը շատ բնորոշ է և մի աւելորդ անգամ էլ հանում է հասարակութեան առաջ այն դրութիւնը, որ թագաւորում է Բագւում: Դատաստանական դահլիճում բացված տեսարանը մենք զուտ տեղական չենք համարում. ընդհակառակը, փոխեցէք մեղադրվող կրեսոսի անունը, փոխեցէք քաղաքի, երկրի անունը,—և յանցանքը չի չքանայ. Նա կայ ամեն տեղ, ուր ցեխի և կեղտերի մէջ թաղված աշխատաւորը միլիօններ է աշխատում հարուստի համար: Գործարանական կեանքի մէջ աղէտները միշտ աշխատող մարդու հետ են, ամեն քայլափոխում սպառնում են դարձնել նրան մի հաշմանդամ դժբախտ, որին մնում է միայն հաց մուրալ իր ընտանիքի հետ: Բայց կայ մի հանգամանք, որի դիմաց չէ կարող արդարանալ ոչ մի կրեսոս: Դա այն անխիղճ, ամարդի յարաբերութիւնն է, որ կայ գործատիրոջ և վնասված բանւորի մէջ: Հէնց որ աշխատող մարդը ֆիզիկապէս անկարող է դառնում աշխատելու, նրան դուրս են շպրտում անպէտք իրի պէս և ոչ ոք այլ ևս չէ հետաքրքրվում թէ ինչ սոսկալի ապագայ է սպասում այդ անընդունակ արարածին: Օրէնքը, ճիշդ է, պաշտպանում է նրան և իրաւունք է տալիս վնասներ պահանջել գործատէրից. բայց այդ միջոցը միշտ մատչելի՞ է զրկվածին—ահա հարցը: Խեղճ, անդամալոյծ աշխատաւորը կարո՞ղ է դատարանի առաջ դուրս գալ, քանի որ կրեսոսի համար ոչինչ բան է հմուտ իրաւաբանների օգնութեամբ պաշտպանվել և գործը դատաստանական բարձր ատեաններ անցկացնել: Ի հարկէ ոչ: Նաղիևի գործում դատարանը վճռեց աշխատանքին կատարելապէս անընդունակ դարձած Շուբինի օգտին երեք հազար րուբլի, թեթև վէրքեր ստացած բանւորների օգտին 75-ական րուբլի: Իսկ երկու բանւորները, որոնք իրանց կեանքը զոհեցին, մոռացութեան են տրված. երևի, նրանց կողմից ոչ ոք չը կար դատարանում, երևի, նրանք կատարելապէս անտէր էին կամ նրանց ընտանիքները հեռու են Բագուից, ապրում են գաւառի խուլ անկիւններում, ուր ամեն դժբախտութիւն երկնային պատուհաս է համարվում:

Դրանց, այդ զոհերին, չը պիտի մոռանար կրեսոսը, երբ դատարանը ձեռքի տակ միջոց չունի նրանց վերաբերմամբ էլ պարտաւոր վճիռ դնելու: Նաղիևները իրանց նեղ հաշիւներով, ի հարկէ, երբեք չեն հասնի պարտաճանաչութեան այն կէտին, որ իրանց համար անվիճելի կարգ համարեն՝ վարձատրել դժբաղդացած բանւորներին առանց դատարանի, առանց ստիպողական միջոցների: Ահա այդտեղ է իրականութեան ամենացաւելի կողմը. այդտեղ կրեսոսների մէջ պէտք է զանազանութիւն որոնել և մենք կը տեսնենք, որ մեր տեղացիները ներկայանում են ասիական հասկացողութիւններով տոգորված անհոգի արարածներ: Երեք ամսվայ բանտարկութիւն երկու ոչնչացած կեանքի համար—մեր կրեսոսները ուրախ կը լինեն, եթէ միշտ այդպէս ազատվեն:

*

Մենք շատ անգամ ենք առիթ ունեցել ասելու, որ եթէ կան տեղական ազգաբնակութեան բարօրութեան թշնամիներ, դրանց մէջ, անշուշտ, նշանաւոր տեղ է գրաւում այն զզուելի սկզբունքը, որ ասում է. «Ես կուշտ եմ, ուրիշ ոչ մի բան չեմ հասկանում»: Եսամոլութիւնը մեր ազգաբնակութեան այնպիսի վնասներ է հասցնում, ինչպէս, օրինակ, մորեխը, կարկուտը, երաշտութիւնը, դաշտային մկները: Եւ եսամոլութիւնը արտայայտվում է ոչ միայն անպատրաստ, խաւար մասսայի մէջ, այլ նոյն իսկ հասարակական այնպիսի հիմնարկութիւնների մէջ, ուր գործողները կրթութիւն ստացած մարդկանց համբաւ են վայելում: Այսպէս էր Թիֆլիսի դուման, որ մերժեց Գիւղատնտեսական ընկերութեանը մի կտոր գետին տալ՝ երկրագործական գործիքների պահեստի համար: Դուման ասաց. մենք ի՞նչ գործ ունենք գիւղատնտեսութեան հետ, որ գիւղացիներին է վերաբերվում: Քաղաքը, ուրեմն, գիւղին չը պիտի օգնէ. գիւղացու ապաւէնը միայն Աստուած է, և ինչո՞ւ պիտի քաղաքացին մի որ և է բէլական փաստով ցոյց տայ թէ, ընդհակառակն, մարդն էլ կարող է օգնել գիւղացուն: Թէև դուման յետոյ փոխեց այդ վճիռը, բայց փաստը փաստ է մնում և «Кавказское Сельское Хозяйство» լրագիրը իրաւունք ունէր իր վերջին համարում մի դաս տալ «պատուական քաղաքացիներին», որ գիւղացուն օգնելը նշանակում է և քաղաքացուն օգնել: Այդքան տարրական դասի կարօտ էին մեր քաղաքային գործիչները:

Մատնացոյց անելով, որ վերջին տարիները մեր երկիրը զգալի չափերով աղքատանում է, յօդուածագիր պ. Իօսսելեանի ասում է.

Ժողովրդի աղքատանալը այնքան խիստ զգալի է դարձել, որ համարեա մեր բոլոր մինիստրութիւնները հոգ են տանում միջոցներ գտնելու, որ կարելի լինի ժողովրդական բարեկեցութիւնը բարձրացնել: Այդ միջոցներից մէկն է հեշտ հնարաւորութիւն տալ գիւղացուն, որ նա օգտվի կատարելագործված գիւղատնտեսական տեխնիկայից: Այդ նպատակով երկրագործութեան մինիստրութիւնը ընկերութեանը դրամական միջոցներ է տալիս, իսկ դումայի ձայնաւորները ասում են թէ քաղաքը գործ չունի գիւղատնտեսութեան

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ԽԱԲՐԻԿ ՄԸ ՉՈՒՆԻ՞Ս»

(Իմ յիշողութիւններից)

—

Ամերիկայումն էր: Ձմերային մի ցուրտ երեկոյ. ձիւնը եկել, կուտակվել էր, ճանապարհները փակվել էին, տրամվէյները կանգնել: Սառը քամին էլ փչում էր կատաղաբար, ձիւնի ահագին քուլաներ բարձրացնում գետնից, կտուրներից և անխնայ զարկում իմ երեսին ու ականջներին:

Իսկ բնակարանս—հեռու. հարկաւոր էր առժամանակ մի տեղ պատսպարվել և ես ուղղեցի իմ քայլերը դէպի հայ պանդուխտների ժողովատունը, որ գտնվում էր աջ թևիս վրա՝ Բոստոնի մի խուլ փողոցում: Փոթորկի ճանկերից ազատված՝ սառած, փայտ կտրված, հայ տան շեմքը կոխելիս՝ մի ինչ որ արևելեան կերակրի հոտ առնելով, ինձ թւաց, թէ հայրենիքումն եմ և ոչ հիւսիսային Ամերիկայում: Բայց այդ իլլիւզիան երկար չը տևեց, երբ փոխանակ գորգով, կապերտներով զարդարված խըճիթների՝ իմ աչքին հանդիպեցաւ տախտակեայ մերկ, ցեխոտ յատակը, մի սեղան առանց ծածկոցի, չորսն էլ մի քանի աթոռներ՝ որի մէջքը, որի ոտքը կոտրած…

Տանը, բացի խոհարարից, ոչ ոք չը կար. գործաւորները դեռ չէին վերադարձել: Խոհարարն էլ հայ էր, Խարբերդի նահանգից. ամբողջ ամիսներ պարապ թափառելուց և ոչ մի գործարանում աշխատանք չը գտնելուց յետոյ, ճարահատեալ, դիմել էր այդ արհեստին: Ո՞ւր ասես, որ նա ոտք դրած չը լինէր, Նիւ-Եօրկից սկսած Ֆօլ-Րիվըր, Փրովիդէնս, ապա Ուստր, Լօրէնս, Լօվէլ, Նեաշուայ, Լին… Բոստոն: Հայրենակիցները շատ ջանքեր էին արել սրան մի գործարան մտցնելու, բայց իզուր:

—Է՛հ, ինչ արած,—մի խոր հառաչանք քաշելով, վերջացրեց իմ խօսակիցը.—սա էլ Աստուծոյ պատիժն է, խոհարարութիւն չէինք արել, խոհարար էլ դառանք:

Այդ միջոցին բանւորները հետզհետէ, շտապ-շտապ ներս վազեցին մէկը միւսի ետևից, կեղտի, մազութի մէջ թաթախված, ոմանք էլ փոշիով, բամբակի թելերով ծածկված: Նրանք լուացվեցին և հաւաքվեցին սեղանի չուրջը ընթրելու:

Քիչ յետոյ ծանր քայլերով և մռայլոտ եկաւ մի բարձրահասակ և յաղթանդամ տղամարդ. երկար դեղնագոյն վերարկուն հագին, մի մտրակ էլ ձեռքին: Դա սայլապան էր, որի համար բնութեան գժտութիւնները, ցուրտն ու փոթորիկը կարծես այլ ևս գոյութիւն չունէին: Նա ծանրաքայլ մօտեցաւ սենեակի անկիւնին, դրեց այնտեղ իր երկար մտրակը, ապա առանց հանվելու, առանց լուացվելու նստեց ընթրիքի. Նրա կօշտ, հաստացած ձեռքերին ջուրը, այն էլ ցուրտ ջուրը ինչ ազդեցութիւն պիտի անէր: Նրա դէմքի տխուր, վեհ, խորհրդաւոր արտայայտութիւնը մի ակամայ յարգանք էր ներշնչում. ակամայ դու էլ համակվում էիր նրա տրամադրութեամբ:

Բանւորները իրար սեղմվեցան և ակնածութեամբ տեղ բացին ալևորի համար:

Տասն և մէկ հոգի էին պանդուխտները. բոլորն էլ Խարբերդի նահանգի մի և նոյն գիւղից, զանազան տարիքի՝ երեսին դեռ աղուամազ չը բուսած երիտասարդ-պատանուց սկսած մինչև սպիտակահեր ծերունին: Անօրէնք հանգամանքները հասակ չեն ճանաչում. Նրանք քշել, դուրս են վանդել հայրական օջախից անխտիր բոլորին, պոկել, հեռացրել են թշուառ վաճառից հարազատ զաւակներին և ցրվել, սփռել նրանց աշխարհիս չորս կողմը: Ո՞ւր Խարբերդ, ո՞ւր Բոստոն, Թիւրքիա և Ամերիկա:

Մինչդեռ ես մի անկիւն քաշված, տխուր մտածողութիւնների մէջ, հարց էի տալիս՝ մինչև երբ պիտի տևի այս,—բանւորները լուռ ու մունջ, տրտմութեան քօղը երեսներին, շարունակում էին իրանց համեստ ընթրիքը: Հայրենիքից եկած լուրերը, գործարանական չարքաշ կեանքը, մութ, անորոշ ապագան այլ ևս ծիծաղբերքի ախորժակ չէին թողել նրանց մէջ:

Ընթրիքը վերջացաւ. վերկացան, իւրաքանչիւրը իր աթոռն առնելով յետ քաշվեց դէպի պատի տակը: Այդ միջոցին սայլապանը, որ բոլորից տարիքաւորն էր, դիմելով երիտասարդներից մէկին, ասաց.

—Յարութ, երկրէն ըսօրի առած նամակը ինչ ըրիր, կարդա՝ տեսնենք, ինչ կը գրեն:

Յարութը միակ գրագէտն էր այդ տան մէջ: Նամակը գրպանից հանելով՝ մօտեցաւ լամպին: Բոլորն էլ ուշադրութիւնները լարած անհամբեր և սրտատրոփ սպասում էին՝ արդեօք ինչ նոր չարագուշակ լուրեր է բերել երկրից բարակ

հետ: Բայց ճիշդ է դա: Միթէ քաղաքը գործ չունի թէ գիւղացին արդեօք լաւ հունձ է ստանում, թէ վատ, հանգամանքներ, որոնք թանգացնում են հացը քաղաքային շուկաներում: Միթէ քաղաքացիների շահն է ունենալ շուկաներում ալիւր չը զտված ցորենից: Մեր գիւղատնտեսական բոլոր նիւթերը, որոնք քաղաք են բերվում, բարձր յատկութիւններ չունեն: Նիւթերի այս որակութիւնը ձեռնտու չէ թէ քաղաքի և թէ գիւղերի համար: Գիւղատնտեսական գործիքների պահեստ շինելը ամենից առաջ նկատի ունի մեր կեանքի այս բոլոր անյամարութիւնները վերացնել, որոնք հաւասար չափով աննպաստ են թէ քաղաքի և թէ գիւղերի համար:

Պարզ չէ: Եթէ ուրիշի օգուտը, յարմարութիւնը, բարեկեցութիւնը ձեզ համար շատ մշուշապատ հասկացողութիւններ են, գոնէ ձեր սեփական օգտի համար հասկացէք: Եսամոլութիւնը այնքան նեղ, մթնացնող մի չարիք է, որ տանջում է նոյն իսկ իր ամենաեռանդոտ քուրմերին, թոյլ չը տալով նրանց տեսնել, որ նոյն իսկ «ես» պաշտելու համար հարկաւոր է մի-մի էլ ուրիշին նայել...

ՖԵՐԳԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԸ

(Նամակ Կօկանդից)

—

Արդէն վերջացած է Սամարկանդ-Անդիժանեան երկաթուղու գիծը և գնացքները գրեթէ կանոնաւոր երթեւեկում են Սամարկանդ—Տաշկենտի և Անդիժանի միջև:

Կօկանդ վաղուց յայտնի է իբրև առևտրական քաղաք և արդիւնաբերութեան կենտրոն: Այժմ երկաթուղու շնորհիւ սրա նշանակութիւնն աւելի բարձրանում է, որովհետև տեղային արդիւնաբերութիւնները արագ և հեշտ արտահանութեան ճանապարհ ունեն: Կօկանդի նշանակութիւնը բարձրացնում է և այն աշխարհագրական դիրքը, որ նա գրաւում է շրջակայ երկիրների նկատմամբ:

Թուրքեստանեան երկիրը բաղկացած է երեք շրջաններից (область)—Սամարկանդ, Սիր-Դարիա և Ֆերգանա: Վերջինս տարածվում է համանուն հովտի վրա, որն երեք կողմից պատած է լեռնաշղթաներով և միայն արևմուտքից Խօջէնդի կիրճով միանում է Զարաւշանի հովտի հետ: Ֆերգանեան հովտի ամբողջ երկարութեամբ (մօտ 250 վերստ) անցնում է Սիր-Դարիա գետը, իր մէջ ընդունելով աջ ու ձախ կողմից հոսող վտակներն ու գետակները: Այդ ջրերով են ոռոգվում Կօկանդի և շրջակայքի դաշտերն ու այգիները:

Արգաւանդ ու բերրի հողը, առատ ու յստակ ջրերի թողած պակասը լրացնում է բարեխառն գօտուն յատուկ ջերմութիւնը և այս բոլորը Ֆերգանեան հովիտը կլիմայական ամենալաւ պայմանների մէջ դնելով՝ տուել է այս երկրին կատարեալ դրախտի կերպարանք: Խաղող, թութ, ծիրան, ընկոյզ, սեխ և ձմերուկ աճում են մեծ առատութեամբ: Գետերը հարուստ են ձկներով, որոնցից նշանաւորն է լըքօ կոչուածը:

Անկասկած, ռուսաց տիրապետութիւնից առաջ, այս երկրում ամեն ինչ նահապետական վիճակի մէջ էր: Ոչ ոք չէր մտածում մշակել հողը, արդիւնաբերել և կարիք էլ չը կար, քանի որ ինքն իրան աճող խաղողը, ընկոյզը և այլ տեսակ-տեսակ պտուղներն էլ բաւական էին տեղացի ծոյլ ու մեղկ սարթերի կենսական պէտքերը լրացնելու: Ռուսաց նուաճումից ի վեր, 1864 թւից սկսած, հետզհետէ կերպարանափոխվում է Թուրքեստանը և նրա մի մասը—Ֆերգանեան շրջանը: Բամբակը, որ մինչև այդ մշակվում էր լոկ տնային կարիքները հոգալու, կտաւ և սրա նման գործուածքներ պատրաստելու համար, այժմ, շնորհիւ եւրօպական կուլտուրայի և պահանջների, կանոնաւոր արդիւնաբերվում և արտահանվում է: Կան մեծ քանակութեամբ թթենի ծառեր, որոնք խիստ արագ աճում են այս երկրում. ամեն մի տուն, այգի կամ արտ շրջապատված է թթենիներով, որոնք և շերամապահութեան առաջին պայմանն են: Տեղացիները վերջին տարիներում մեծ քանակութեամբ շերամ են պահում, որից և առատապէս օգտվում են: Արդիւնաբերութեան կողմից առաջին տեղը գրաւում է բամբակը, ապա շերամը. իսկ ծիրանը, բրինձը, քնջիթը և այլ բազմատեսակ մրգեղէնները, որ նոյնպէս աճում են մեծ առատութեամբ, դեռ չեն արտահանվում խոշոր քանակութեամբ: Կենսական մթերքների կատարեալ էժանութիւն և առատութիւն է տարվան ամեն ժամանակ:—Հացի փութը՝ 3—5 կոպէկ, միսը՝ 4—5 կոպ. հաւ, ճուտ, կաքաւ, բադ (վայրի թռչուններ) 10—15 կոպէկ, խաղող (յունվարին) 3 կ., սեխ—10 կոպէկ, իսկ գնայուն ջրերից որսած բաւական համեղ ձկները, որ գիւղացիները բոլորովին չեն ուտում, փութը՝ 2—3 կոպէկ, որքան և երբ կամենաք, կը գտնէք շուկայում:

Ֆերգանայի նահանգական քաղաքն է Նոր-Մարգելան, որը լինելով ռուսների ձեռքով շինված քաղաք, ունի կանոնաւոր և լայն փողոցներ, եւրօպական ճաշակով շինված տներ և դրա հետ միասին առատ ջուր և մաքուր օդ: Կօկանդը գտնվում է այս նահանգում և Մարգելանից հեռու է դէպի արևմուտք 80 վերստով: Կօկանդը թէև առողջապահական տեսակէտից Մարգելանի յարմարութիւնները չունի, բայց իր բազմամարդութեամբ, արգաւանդ հողով, առատահոս ջրերով և փարթամ բուսականութեամբ անհամեմատ բարձր է Թուրքեստանի բոլոր քաղաքներից, որոնց թւում և Տաշկենտից, ուր նստում է երկրի ընդհանուր-նահանգապետը:

Միայն Կօկանդն իր շրջակայքով տարեկան մօտ հինգ միլիօն պուդ բամբակ է տալիս օտարազգի ֆիրմաների այդտեղի բաժանմունքներին: Եթէ ի նկատի առնենք, որ ամբողջ Երևանեան նահանգը ամենալաւ տարին մատակարարում է ոչ աւել քան կէս միլիօն պուդ, ապա ուրեմն Կօկանդն իրաւամբ կարող է համարվել բամբակի հայրենիք Ռուսաստանում: Դժուար թէ Միջին-Ասիայում լինի մի այլ քաղաք—զանազան ֆիրմաների բաժանմունքներով հարուստ, ինչպէս Կօկանդն է: Այստեղ, Ռօզենբախեան պրօսպէկտի ամբողջ երկարութեամբ (մօտ 2 վերստ), աջ ու ձախ շարված են գրասենեակներ և պահեստներ այլ և այլ ֆիրմաների, որոնց անունն անգամ լսած չենք Կովկասում և Անդրկասպեան երկրում: Այստեղ են Понфикъ-Аренцъ и к°, Кнопъ и к°, Бр. Крафтъ, Познанскій, Владиміръ Алексѣевъ Ярославская большая мануфактура, Генрихъ-Блокъ и к° և այլ առևտրական ֆիրմաները, որոնք մանաւորապէս բամբակ են արտահանում և ահագին հեղինակութիւն ունեն այս կողմերում: Բանկային հաստատութիւններից կան պետական բանկի, Մոսկվայի միջազգային—առևտրական և Վոլժսկի Կամսկի բանկերի բաժանմունքները: Մի խօսքով երկրի առատութեանը նայելով և արտահանողների քանակութեանը, թերևս ի դէպ լինի կրկնել աւետարանի խօսքերը—«հունձք բազում են և մշակք սակաւ»:

Բայց մի հարցնող հարց՝ ինչ չափով են օգտվում մեր հայերն այս առատութիւնից, մանաւանդ նրանք, որոնք տասնեակ տարիներից ի վեր հեռացած հայրենիքից, մոռացած տուն, ծնողներ և մինչև իսկ ամուսիններ—դեգերում են այս կողմերում: Պատասխանն է—ոչինչ: Մի քանի ամիս առաջ առիթ եմ ունեցել թերթելու տեղական ռուս լրագիրներից մէկը, որտեղ շովինիստ յօդուածագիրը հրաւիրում էր ում հարկն է՝ ուշք դարձնել հայերի վրա, որոնք որպէս թէ տարափի պէս տեղում են Թուրքեստանեան երկիրը և որպէս թէ շուտով տեղային առևտուրը և հանքային հարստութիւններն իրանց ձեռքը կառնեն (!!): Այդ ժամանակ ես Տաշկենտումն էի, ուր խոշոր առևտրական հայեր չը կան, և սպասում էի հայերի այդ տարափին հանդիպել Կօկանդում, իբրև շահաստան քաղաքում: Բայց որքան մեծ եղաւ զարմանքս, երբ այստեղ էլ հանդիպեցի լոկ արհեստաւոր և մի քանի խանութպանէր բախտախնդիրների: Ճշմարիտ է, Կօկանդում ներկայացուցիչներ ունեն պ.պ. Թումանեանց և Գէորգեանցներ, որոնցից առաջինը ունի բամբակ մաքրելու գործարան, իսկ երկրորդը նոյն իսկ արտահանում է բամբակ, բայց համեմատած օտարազգի ֆիրմաների հետ, սրանք, պէտք է ասել, այնքան էլ նախանձելի դիրք չեն գրաւում այդտեղ:

Միայն մի բան, որ խօսակցութեան նիւթ է եղած, դա այստեղ ապրող մի հայ է, որ կոփածոյ քարից կառուցել է մի հոյակապ տուն՝ Կօկանդին նայելով՝ իրօք ուշադրութեան արժանի: Պէտք է ասել, որ Թուրքեստանում չը կայ մի շինութիւն, որ ամբողջովին սրբատաշ քարից լինի շինված. հինաւուրց մզկիթներն ու կամուրջները և նորակառոյց եկեղեցիները մեր երկրի բոլոր անկիւններում՝ աղիւսաշէն են, դա թերևս քարի հեռաւորութեան և աղիւսի էժանութեան պատճառով է: Հակված եմ կարծելու, որ հէնց այսպիսի չնչին չարժաքինութիւններից և կոյր նախանձից դրդված են բարձրացնում իրանց կաղկանձող ձայնը յաւետեւ և հայակեր յօդուածագիրները:

Երկաթուղու գծի երկարութեամբ ընդլայնեցին Կօկանդում և Տաշկէնտում բաժանմունքներ բաց անելով Անդրկասպեան ընկերութիւնը, պ.պ. Սարուխանեանց և Տէր-Օհանեանց, որոնք առհասարակ այս կողմերում ճանաչված, յարգված են և պատուաւոր տեղ են բռնում: Դրանք մանաւորապէս կէրօսինի առևտուր են անում այս կողմերում: Պէտք է յուսալ, որ այս ֆիրմաները չեն բաւականանայ լոկ նաւթային առևտուրով, որ ինքն ըստ ինքեան շատ էլ արդիւնաւէտ գործ չէ, այլ կընդարձակեն իրանց գործողութիւնները Միջին-Ասիայում, արտահանելով տեղական զանազան արդիւնաբերութիւնները ևս: Տեսնենք:

Գ. Տէր-Մինասեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք, որ շուտով պէտք է հաստատվի Անդրկովկասի տ ն ա յ ն ա գ ո ր ծ ու թ ի ւ ն ը զարգացնելու համար յ ա տ ու կ պ ա շ տ օ ն ե ա յ, որ բացառապէս պիտի զբաղվի տնայնագործութեան խնդիրներով և տնայնագործական փորձերի ղեկավարութեամբ: Երկրագործութեան մինիստրութիւնը, որի հսկողութեան և հոգատարութեան տակ է գտնվում տնայնագործութիւնը, պատրաստ է իր կողմից տալ նաև դրամական նպաստներ: Ցանկալի է, որ մեր գաւառները օգտվէին բարձր շրջանների նպաստաւոր տրամադրութիւնից և խնդրամատոյց լինէին, որ իրանց շրջանում մտցնեն այն տնայնագործական արհեստները, որոնք շահաւէտ և նպատակայարմար են:

—

Վաղը, կիրակի, յունվարի 31-ին, Թիֆլիսի Արտիստական ընկերութեան դահլիճում տեղի կունենայ Թիֆլիսի հայոց Հ ր ա տ ա ր ա կ չ ա կ ա ն ընկերութեան ե ր ե կ ո յ թ ը, որ բաղկացած կը լինի ներկայացումներից, կօնցերտից և պարերից: Մասնակցում են բազմաթիւ անձինք երկու սեռից: Պէտք է ցաւ յայտնել, որ երեկոյթի համար նշանակված է այնպիսի փոքրիկ բնակարան, ինչպէս է Արտիստական ընկերութեան բնակարանը: Լսում ենք, որ երեկոյթին ներկայ լինելու ցանկացողների մի մասը դժուարանում է տոմսակներ ձեռք բերել:

—

Կարօտեալների օգտին մեր խմբագրութեան մէջ ստացվեց Ֆօրտ-Ալէքսանդրովսկից, Յովհաննէս Արաքեանից, տասն րուբլի, որ և բաժանեցինք:

—

Խմբագրութեան մէջ ստացվեցին հետևեալ նոր գրքերը. 1) Ն. Մամիկոնեանի՝ «Զհասութիւն», վէպ գիւղական կեանքից, Թիֆլիս 1899, փոքրադիր 174 երես, գինը 50 կոպէկ, 2) Եղնիկ քահանայ Երզնկեանցի՝ «Դասագիրք կրօնի» առաջին գրքոյկ, երկրորդ տպագրութիւն, Թիֆլիս, 1899, գինը 20 կոպէկ. 3) Յարութիւն Թումանեանցի՝ «Հանաք ու Դանակ» երկասիրութեան առաջին գրքոյկը, որի մէջ զետեղված են «Կնեազի չաչէքն» և «Սատանայ բռնողներ» գրուածքները, Թիֆլիս, 1899, գինը 30 կոպէկ, 4) Ատրպետի՝ «Փառանգներ», պատկեր թիւրքահայերի կեանքից, Նոր-Նախիջևան, 1899, գինը 30 կոպէկ և 5) Ա. Ահարոնեանի՝ «Բաչօն», պատկեր, արտատպված «Մշակ» լրագրից, Թիֆլիս, 1899, գինը 5 կոպէկ:

—

Մեզ խնդրում են յայտնել, որ այգեգործական ընկերութեան գրասենեակը բաց է ցանկացողների համար ամեն օր, երեկոյեան ժամը 6—8-ը, ստանալու հերթական անդամ Ա. Կլասունից զանազան տեղեկութիւններ և խորհուրդներ այգեգործական հարցերի վերաբերութեամբ: Իսկ այսօր, շաբաթ, յունվարի 30-ին, երեկոյեան ժամի $7^1/_2$-ին, պէտք է տեղի ունենայ գրոյց մրգաբուծութեան մասին:

—

Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ, 1877-ին, Մոսկվայի ուսումնարանական շրջանի ուսանողների և ուսուցիչների մէջ հանգանակութեամբ հաւաքվել էր 23 հազար րուբլի, այն նպատակով, որ այդ պատերազմում սպանված օֆիցէրների որբերին թոշակ սահմանվի ուսում ստանալու համար: Սակայն այդ օրից մինչև այժմ ոչ ոք թոշակ ստանալու ցանկութիւն չը յայտնեց և գումարը, աճելով, դարձաւ 41,000 րուբլի: Այժմ մինիստրների խորհուրդը որոշել է այդ գումարը անձեռնմխելի ֆոնդ շինել և նրա տոկոսներով թոշակներ սահմանել ռուս-թիւրքական պատերազմում սպանված կամ վիրաւորված օֆիցէրների որբ երեխաների համար, իսկ եթէ այդպիսիները չը գտնվեն, թոշակները պէտք է յատկացնել Մոսկվայի շրջանի աղքատ աշակերտներին և աշակերտուհիներին:

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են. «Քաղաքում և շրջակայ գիւղերում սաստիկ տարածված է ինֆ-

---

թղթի այդ կտորը: Ցարութը կամաց, զգուշութեամբ և փայփայելով բացեց նամակը, ապա սկսեց ծանր, հեգելով կարդալ:

Նամակագիրը պատմում էր իրանց գլխին եկածները: Պարզ և անպաճոյճ ոճով նկարագրում էր նա այն բոլորը, որին ինքը ականատես և զոհ է եղել:

Նամակագիրը—Մարիամը—թւում էր մի առ մի... «Կորսվաւ ամենը, պատուինիս մնաց... Այժմ մերկ, քաղցած, հաւաքվել ենք բեռանց թոնրատունը—տունը այրած են—ութ ընտանիք միմեանց վրա թափթփված: Աման, ջաներնիդ ղուրբան, փող հասցրէք, սովից մեռանք»...

Ցարութը չնչապառ, լեզուն հազիւ էր շարժում. այժմ նա հասել էր նամակի վերջին, ուր նամակագիրը կարծես թէ դիտմամբ զետեղել էր մահացուցակը, զոհերի մի երկար շարքը: ...«Գրիգորը, Պօղոսը, Թոմասը... կեանքերնին ձեզ բախշեցին»:... Տիգրանը...

Ընթերցողի ձայնը դողաց, նամակը ձեռքից վայր ընկաւ. Նա շրթունքները սեղմեց. արտասուքի երկու խոշոր կաթիլներ ցոլացին աչքերից և թրջելով թուխ այտերը՝ վայր գլորվեցին... Տիգրանը իր եղբայրն էր, տանը մնացած միակ եղբայրը:

Մի սարսափելի լռութիւն էր, որ տիրեց այդ բազմատանջ բանւորների աղքատ սենեակում: Շուրջս, որը թեքված էր իր աթոռի վրա, որը գլուխը ձեռքերի մէջ առած, բոլորն էլ լուռ արտասվում էին: Տասն և մէկ թշուառներից գրեթէ մէկն էլ անբաժին չէր մնացել. որի եղբայրներն էին մեռած, որի հայրը, որի որդին...

Լուռ էին պանդուխտները. դուրսը քամին հանդարտվել, մեղմացել էր. այլ ևս չէր ոռնում մոլեգնաբար, միայն մի ինչ որ տխուր, մելամաղձոտ եղանակ էր նա փչում, իսկ ինչ տեսակ սև սև ամպեր էին այդ րոպէին պատել այն մի բուռն պանդուխտներին. ինչ տեսակ մտքեր, զգացմունքներ էին զարթնում, յուզում, խռովում իւրաքանչիւրին...

—Քանդվեց տուներնիս,—բացականչեց ծերունի սայլապանը, ձեռքը ծնկանը խփելով:

—Պատուինիս մնաց, կը գրեն... ով գիտէ՝ թէ պատուինին ևս չեն կորցրել,—ասաց նա դառնութեամբ:

Ծերունին լռեց, ապա քիչ ընդմիջումից յետոյ տեղից բարձրացաւ և շեշտելով ասաց.

—Տասն և վեց տարի է, որ ես տանից-տեղից հեռացել, պանդխտութեան մէջ եմ մթնացնում օրերս: Համալ էի Պօլիս մի քանի տարի, ապա քաղաքից քաղաք, երկրից երկիր թափառելով, հասայ Մարսէյլ. այդտեղ նաւ նստեցայ, ովկիանոսը կտրելով, վերջապէս ընկայ այս երկիրը: Ո՛չ լեզու գիտէի, ո՛չ էլ կարդալ-գրել: Ինչ դըժուարութիւններ, ինչ չարչարանք չը քաշեցի—այդ Աստուծուն է միայն յայտնի—մինչև որ կարողացայ մի գործ ճարել: Տասը տարի և վեց ամիս է, որ ես ոտք դրի Ամերիկա, տասն ու կէս տարի բանւորական չարքաշ կեանք, իսկ այժմ գործարանից դուրս վռնդված, փողոց նետված՝ որպէս ծեր, ուժասպառ բանւոր. այժմ սայլապան եմ... Տասը տարի և վեց ամիս—հեշտ է ասելը չէ՞: Է՛լ տօն օրեր, է՛լ պաս, է՛լ Զատիկ չը կայ, հայութիւնն իսկ մոռացանք: Ամառ-ձմեռ աշխատենք, արիւն քրտինք թափենք, փոշու, իւղ-ծխի մէջ փտենք, ծերանանք. կը տեսնես այս մազերը, հօս, այս տեսակ կեանքի մէջ ճերմակեցուցի: Զրկեցինք մեզ ամեն ինչից՝ ուրախութիւնից, շորից. մեր բերաններից կտրեցինք, որ երկիր ուղարկենք, երեխաներ պահենք, մեծացնենք, տուն սարքենք... Ինչո՞ւ, ո՞րի, ո՞ւմ համար...

Սայլապանը լռեց: Նրա աչքերը մի առանձին փայլ էին ստացել, հասակը ձգվել, աւելի բարձրացել: Նա այլ ևս այն լուռ ու մունջ ծերունին չէր, այլ մի մարմնացած բողոք, որ կատաղած՝ դառնութեան շանթեր էր արձակում. երկար ժամանակից ի վեր իր սրտի խորքերում կուտակված թոյնը աշխատում էր նա թափել, դատարկել. բայց իզո՜ւր. հարուածը անբուժելի էր և մահաբեր:

Ծերունին վառեց ծխախոտը, նստեց, ձեռքերը ծնկներին յենած, աչքերը բեռած յատակի մի կէտի վրա:

Նորից տիրեց մի խորին երկար լռութիւն:

Ուշ գիշեր էր արդէն: Հարկաւոր էր պառկել, որպէս զի վաղ առաւօտեան, լուսածագին գործարանում գտնվեն: Պանդուխտները բարձրացան և առանց սովորական «բարի-գիշեր» միմեանց ասելու, անցան հարևան սենեակները պառկելու: Գուցէ կարողանան գոնէ կոշտ անկողնի մէջ մի քանի ժամ մոռացութեան տալ իրանց դարդ ու վիշտը:

Իսկ ծերունին նստած՝ անընդհատ ծխում էր:

Ես ևս թողեցի ծերունուն միայնակ, և առանց միաս-բարեաւ ասելու, ծանր տպաւորութիւնների տակ դուրս եկայ թշուառների բնակարանից:

Ս. Շխեանց

լունգա հիւանդութիւնը: Հիւանդանում են թէ հասակաւորները և թէ երեխաները: Գիւղերում բժշկական օգնութիւնը բացակայելով՝ հիւանդութիւնը բազմաթիւ զոհեր է տանում:»

—

Նոյն տեղից մեզ գրում են. «Դաժան և ցուրտ օրերին յաջորդեցին տաք եղանակներ: Ձիւնը հալվեց: Դաշտերում արդէն երևացել է ձնծաղիկ: Կանաչը բուսնում է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԳԱՄԱՒՈՐ ՄՈՒՆԿԷԼԻ ՃԱՌԸ

—

«Русск. Вѣд.» լրագրի Բեռլինի թղթակիցը գրում է, որ ռէյխստագում, ազատ մտածողների կուսակցութեան կողմից Բարտ հարցապնդում արեց դանիացիներին Շլէզվիգից աքսորելու պատճառների մասին: Ձը նայելով, որ այդ բանը ամենքը վաղուց գիտէին, բայց ազատ մտածողները այդ հարցապնդումն անելով, կամենում էին ցոյց տալ, որ Շլէզվիգի օբէր-նախագահ Կէլլէրի քաղաքագործութիւններին չեն համակրում բոլոր գերմանացիները: Դեմոկրական կուսակցութեան կողմից յայտնի պատգամաւոր Մունկէլ հետևեալ պատասխանը տուեց մինիստրներին և պահպանողականներին.

«Բարտին, Րիխտէրին, ինձ և մեր բարեկամներին դասեցին դաւաճանների շարքում, որոնք քիչ է մնում, որ հայրենիքի կործանումն են ուզում,—նկատեց հռետորը: Ես մտածում եմ սակայն, որ իւրաքանչիւր արդարամիտ գերմանացու համար, որը չէ կորցրել ճաշակը և չափաւորութեան զգացմունքը, ճոճռուն ֆրազները դեռ ևս իսկական հայրենասիրութեան նշաններ չեն: Որ գերմանական լեզուն, գերմանական օրէնքը և կուլտուրան պէտք է ձգտեն նուաճել սահմանագլխները,—մեզանից ոչ ոք չէ կամենում այդ: Ծիծաղելի կը լինէր գերմանացուն չը ցանկանալ, որ իր ազգութիւնը աչքողութիւն ունենայ: Բայց ցանկանալ հետևանք և հաւանել բոլոր միջոցները—երկու զանազան բաներ են: Պաշտպանել գերմանական սահմանագլուխը, որպէս հայրենիքի անբաժան մասը, և պաշտպանել ֆոն-Կէլլէրի սիստեմը՝ մի և նոյն բաներ չեն, որովհետև, մեր համոզմունքով, Շլէզվիգի ադմինիստրատորի գործունէութեան եղանակը միայն ամեղացնում է դանիական ագիտացիայի վտանգը:

«Հակա-գերմանական տրամադրութիւնը Շլէզվիգում մեզ համար, անկասկած, ցաւալի փաստ է,—ասեց Մունկէլ,—բայց եթէ 35 տարի շարունակ երկիրը տիրելուց յետոյ ատելութիւնը դէպի մեզ գնալով աճում է,—դա վատ թւանշան է մեր վարչութեան համար, որը չէ կարողացել նուաճվածների համակրութիւնը գրաւել: Մենք երբէք չը փորձեցինք քաղցրութեամբ հաշտեցնել մեր «ակամայ համաքաղաքացիներին». բայց մինչև որ վարչութիւնը օրէնքի սահմանումն էր մընում, չը դիմելով բացառական միջոցներին, գերմանացիները և դանիացիները ապրում էին —չեմ ասում բարեկամաբար, բայց հանգիստ, որպէս հարևաններ:

«Դեռ մէկ և կէս տարի առաջ մինիստր Բոսէ ասում էր պատգամաւորների ժողովում, որ կառավարութիւնը գոհ է Շլէզվիգում եղող կարգերից: Ինչ պատահեց այն ժամանակից: Ոչինչ, բացի այն բանից, որ Շլէզվիգի օբէր-նախագահ նշանակվեց ֆոն-Կէլլէր: Նոր հրամանատարը կամենում էր ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է կառավարել նահանգը: Կէլլէր գերմանացնողի դերում նոյն մարդը մնաց, ինչ որ էր նա պատգամաւոր և մինիստր եղած ժամանակ: Բարեկամները կարող են նրան լաւ մարդ համարել. բայց ուսուցչի դերը վարչութեան մէջ—նրա բանը չէ: Նա կամենում էր դանիացիներին ցոյց տալ «գերմանական ույժը»: Եթէ գերմանական ույժը արտայայտվում այն բանում, որ հալածվում են աղքատ մարդիկ, որոնք ոչինչ կապ չունեն ագիտատորների հետ, որ աքսորվում են գիւղական մշակները և կովեր պահող դանիացի կանայք, վատ գաղափար կը կազմեն արտասահմանում մեր զօրութեան մասին: Մենք համարում ենք այդպիսի սիստեմը անարդար, սորացուցիչ և ոչխելօք: Հաւատացէք, որ փոքրիկ Դանիան կը կարողանայ վարձատրել այն մի քանի հարիւր մարդկանց, որոնք մեր վարչութեան շնորհով կորցրին հացի կտոր: Այժմ, ի հարկէ, աւելի ապահով է գերմանական «հայրենասէր» լինել. սակայն հերոսութիւնը՝ կատարելապէս ապահով մնալու գիտակցութեան հետ, զօրեղ և ազնիւ ազգի յատկութիւն չէ: (Աղմկալի ծափահարութիւն ձախակողմում): Էժան հայրենասիրութիւն, էժան զայրոյթ, ահա թէ ինչ (Դիմելով աջակողմին) կարող էք առաջ բերել դիմադրական կուսակցութեան ապացոյցների առաջ: Զօրեղ և իրան յարգող կառավարութիւնը իր ույժը չէ արտայայտում այն ձևերով, ինչպէս դա տեղի ունի մեր սահմանագլխում»:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Տրապիզոն, յունվարի 16-ին

Իբրև տիրացու ժողովրդի տիրացու զաւակ, երբ կուզեմ մի բան գրել, առաջին անգամ ամբողջ ուշքս կը հաւաքեմ առաջնորդի, առաջնորդարանի վրա, թէ արդեօք ինչ աչքի ընկնող բան կը կատարուի հոն: Բայց միշտ սովորական ոչնչութիւն.—վարչութիւնը անկերպարան, անգոյն, կարծես անմիտ երեխաներու ընկերակցութիւն մ'է. ուսումնական խորհուրդը շատ քիչ կը տարբերի. ընդհանրապէս ամբողջ հրապարակը մնացեր է մի քանի խաւարամիտներու, որոնք ամեն ինչ են առաջնորդարանի գործերու մէջ: Մենք ալ ունինք մեր Տատեանները, մեր Բարթուղիմէոսները, միայն շատ մանրացած, գաճաճցած: Առաջնորդական տեղապահ Խսրով վարդապետ միայն խաղալիկի դեր կը կատարէ. բայց ս. Աստուածածնի վերափոխման հարցէն ի վեր ինքնուրոյնութիւն ունի. պարագային համեմատ, թէ՛ պահպանողական է կամ ազատական. ամեն ուղղութեան կուզէ հաճելի լինել. փոքրիկ Օրմանեան մը: Ատեն մը այդպիսի ըսկնակները պատրիարքարանի կողմէն կը ղրկուէին Թեմերը, առաջնորդ-եպիսկոպոսներու մօտ «փոքրաւոր» անունով, որպէս զի հետզհետէ ընտելանան վարչական գործերու. բայց հիմա ժամանակները փոխված են. փորձուած եպիսկոպոսները մայրաքաղաքի մէջ նստած «փոքրաւորութիւն» կընեն ուրիշներու... իսկ նորերը, Արմաշէն դուրս նետուածները պէս՝ իրենք զիրենք կը գտնեն խոշոր Թեմերու կառավարիչ-առաջնորդ:

Տեղիս մէջ հայ ապուշ մը կայ, Բարթոս անուն. սափրիչի ամեն նոր աշակերտ արհեստի առաջին փորձերը անոր գլխուն, պեխին, յօնքին վրա կը կատարէ. արիւնը կը հոսի, պեխերը կածիլուին, Բարթոսին հոգը չէ. բաւական է՝ որ ձրի է և կը կարծէ թէ գեղեցկացեր է: Այսօր մեր ժողովուրդն ալ Բարթոսի դրութեանն է. հասնողը անոր գլխուն վարպետութիւն կը սորվի. դիպլոմատներ, մանկավարժներ, առաջնորդներ, մարդասէրներ (?) բոլորը յարձակուած են վրան: Օրմանեան-Տատեան վերէն, իր ձագուկները վարէն, իրենց աստուածաբանական, քաղաքագիտական փորձերը սկսած են գործ դնել ժողովրդի գլխին: Գոնէ մեր սափրիչները այնքան զգայուն են, որ երբեմն բամբակ կը դնեն Բարթոսի վէրքին վրա և մի քանի փարա ալ ձեռքը կուտան. այդ ալ չը կայ ատոնց քով. ժողովուրդը խեղճ է, թշուառ է, շատ ալ կը հասկնայ իր վիճակը, բայց ինչ ընէ. «խեղդուողը օձին կը փաթթուի»: Գոնէ դուք, ս. հայրեր, մի խաբէք զինքը, մի քնացնէք զինքը, մի կարծել տաք, թէ ինքը պաշտպաններ ունի յանձին ձեզ, մի ահագին պատասխանատու պաշտօններ առնէք. եթէ ժողովուրդը Բարթոսի տեղ դրած էք, գոնէ այնքան սիրտ ունեցէք, որ մի տանջէք զինքը ձեր բութ ածելիներով:

Տեղացի

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Թաւրիզ, յունվարի 20-ին

Զարմանալի են մեր երկրի կարգ ու կանոնը, օրէնքները. ասում են այստեղ առանց փողի որ և է օրինաւոր բան գլուխ չի գայ, և իրաւ՝ ամեն բանում փողը, այդ կլոր աստուածը ցոյց է տալիս իր անճառելի զօրութիւնը, մանաւանդ մեր պաշտօնական դիւաններում, ուր առանց կաշառքի ոչինչ չէ լինում.—գործի սկզբում փէշքէշ (ընծայ), միջում—կաշառք և վերջում—տուգանք, բոլորն էլ խոշոր գումարներ, բոլորն էլ փող...

Ներկայումս, հացի սոսկալի թանգութեան այս ահարելից ճգնաժամի մէջ էլ, ահա այդ վերոյիշեալ անունների տակ ծածկված խոշոր գումարները մեծ դեր են կատարում: Այս օրերս պատահեց այն, ինչ որ պիտի պատահէր:

Քաղաքիս բէկլարբէկին, Մոհթամադ-Նիզամը, որի ձեռքումն էին հազարից աւելի գիւղեր, փոխանակ այդ հանգամանքից օգուտ քաղելու և ժողովրդին օգնելու, ինքն էլ մի կողմից էր ույժ տալիս ընդհանուր թշուառութեան՝ ոչ մի կերպ չը զիջանելով ամբոխի աղէկտուր պաղատանքներին և ահագին քանակութեամբ ցորեն դեռ պահում էր ամբարած, օրէցօր ամբոխի գրգռումն իր դէմ սաստկացնելով: Բայց ժողովրդի ձայնը, վերջապէս, լսելի է լինում մեր կառավարութեան բարձր ատեանում և մի քանի օր առաջ բէկլարբէկին պաշտօնանկ լինելով, կանչվում է Թէհրան հաշիւ տալու: Բա նա՝ դող կատուի նման՝ հասկանալով բանի էութիւնը, մտածում է դիմել վերջին միջոցին—այսինքն կաշառքով ազատել իր անձը: Երեսուն հազար թուման (60,000 ր.) բաւական է լինում մեր թագաժառանգի անմիջական օգնութեամբ անցագիր ձեռք բերելու և արտասահման փախչելու համար: Հինգ օր առաջ նա իր հաւատարիմների հետ դիմում է դէպի Արաքսի ափը (անշուշտ թագուն), բայց յանկարծ գործը այլ ընթացք է ընդունում:

Ամիր-Նիզամը, իմանալով եղելութիւնը, խստիւ հեռագրում է Թէհրան և այնտեղից իրաւունք է ստանում բէկլարբէկուն, ուր որ էլ լինի, ձերբակալելու: Անմիջապէս մի վաշտ զօրք ընկնում է փախստականի ետևից և Մարանդի մօտերքում աջողվում է բռնել նրան իր հինգ հաւատարիմներով միասին և շղթայի զարնելով՝ յետ դարձնել դէպի Թաւրիզ:

Բռնվածները դեռ չեն հասել այստեղ, բայց այս օրերս սպասվում են: Իսկ Ամիր-Նիզամը այդ պաշտօնանկ փախստականի որդուն հսկողութեան տակ դնելով, պահանջում է նրանից 40,000 թուման տուգանք և 80,000 խալվար (3,200,000 պուդ) ցորեն: Լաւ խաղով պատառ է:

Ահա այս է տխուր իրողութիւնը, որ մի առանձին ձևով պտտում է այս օրերս մեր ժողովրդի բերանում. իսկ թէ ինչ վախճան կունենայ այս քստմնելի գործը, այդ էլ այժմից իսկ եզրակացնել կարելի է:

Բայց ամբոխին հաց է հարկաւոր: Ճնշումը պայթիւն կառաջացնի, այդ արդէն հասկանալի է. ուստի և անսպասելի չէ այս ճգնաժամում որ և է խլրտում,—նախկին դէպքերի կրկնութիւնը:

Մարաղայից լուրեր են հասնում, որ իբր թէ փոթորիկը պայթել է արդէն: Սոսկալի խռովութիւններ են բարձրացել այնտեղ. չուկան արդէն քանի օր է փակ է. թալանի ձայներ էլ են լինում. բայց հաստատ տեղեկութիւններ դեռ ևս պակասում են, որովհետև այդ կողմերի պօստը քանի օր է՝ ժամանակից ուշացել է, չէ գալիս:

Իսկ ինչ են անում հայերը: Մեր ինտելիգէնցիան (!) տենդային գործունէութեան մէջ է. հարցը կրկին առաջնորդականն է: Զարմանալի բնաւորութեան տէր են մերոնք: Առաջնորդ չը կայ՝ գանգատվում են, առաջնորդ կայ՝ էլի գանգատվում են: Առաջին դէպքում էջմիածինն է մեղաւոր, իսկ երկրորդում—հէնց ինքը առաջնորդը:

Ասում են՝ առաջնորդն իրաւունք չունի որպէս անձնաւորութիւն ստանալ այս կամ այն թերթը, համակրել այս կամ այն կուսակցութեան: Ահա մեր երեխայական ինքնամոռացութիւններից մէկը, որ թոյլ չէ տալիս մեզ մի փոքր էլ չըջահայեաց լինելու:

Մի ինչ որ կեղտոտ անձի գործը պատրուակ բռնելով, անցեալ շաբաթ գիշեր, լսարանական ընկերութեան դասախօսութեան ժամանակ, քիչ մնաց որ սրբազանի իրաւունքներն ոտնակոխ անէին մի զոյգ և մի կէնտ կուսակցական պարոններ: Իսկ մի ուրիշ աւելի յանդուգն աւելորդ չէր համարել վերջերս իր սիրած փողոցային թերթի մէջ մի երկու խօսք էլ շպրտել մեր առաջնորդի հասցէին, որոնցով կարծես խոստովանում է, որ եթէ սրբազանն իրանց սիրած թերթը չէ ստանում, ուրեմն և իրանց չէ համակրում: Էլ ինչու թոյլ տալ, որ մի այդպիսի առաջնորդ մնայ այստեղ. պէտք է հասարակաց կարծիքը խառնել, որ էլի բռնեն էջմիածնի պոչից՝ թէ այնտեղ մեր մեծերն անտարբեր են, մեզ համար առաջնորդ ուղարկելու յապաղում են: Բայց ինչ դուրս կը գայ դրանից: Դեռ թողէք եղածը ծանօթանայ իր թեմի դրութեան և հանգամանքների հետ և ապա դատեցէք նրա արժանաւորութիւնը: Խեղճ առաջնորդը, եկած չեկած՝ հօ չէր կարող հրաշքներ գործել:

Ա. Ց. Ասման

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Fremdenblatt» լրագիրը, խմբագրական յօդուածի մէջ քննելով բուլղարական մինիստրութեան փոփոխութիւնը, ասում է, որ այժմ կուսակցական տարբերութիւնները Բուլղարիայում այն նշանակութիւնը չունեն, ինչ որ նրանք ունէին առաջ: Աւստրո-Ունգարիան երբէք ուրիշ բան չէր պահանջում, բացի նրանից, որ Բուլղարիան մնայ բուլղարական երկիր, որ բուլղարական մինիստրութիւնը չը լինի ոչ աւստրիասէր, ոչ ռուսասէր, այլ բուլղարասէր: Նոր մինիստրութիւնից,—որքան կարելի է դատել այն բանից, ինչ որ յայտնի է ղեկավարող պետական գործիչի մասին,—պէտք է հէնց գործունէութեան այդպիսի եղանակ սպասել: Ռուսաց «Правит. Вѣстн.» լրագրի հաղորդագրութիւնը նըրան հնարաւորութիւն է տալիս դիմադրել կարգը խախտելու ձգտումներին Մակեդոնիայում: Այդ կողմից նրա անձնաւորութիւնը կատարելապէս վստահելի է: Այդպիսով, նոր կառավարութեանը հնարաւորութիւն է ներկայանում զբաղվել բացառապէս այն հարցերով, որոնք վերաբերում են ներքին զարգացմանը, մանաւանդ ֆինանսներով և կարգի բերելով արևելեան-րումէլիական երկաթուղիների շահագործութիւնը, որն այժմ առաջնակարգ հարց է: Աւստրո-Ունգարիան ամենևին նպատակ չունի, թէ Բուլղարիայում և թէ Բալկանեան ուրիշ պետութիւններում՝ իր ազդեցութիւնը գործ դնել յօգուտ ֆինանսական յայտնի նախագծերի: Աւստրո-Ունգարիան կամենում է, որպէս զի Բալկանեան պետութիւնները վայելեն քաղաքական և տնտեսական ինքնուրոյնութիւն, նա ցանկանում է, որ այդ պետութիւնները խաղաղ կերպով զարգանան, և այդ պատճառով ոչինչ բան այնտեղ չէ ցանկանում, բացի վստահութիւնից դէպի այդ համոզմունքը:

—Վաշինգտոնի լրագիրներն ասում են, որ Մակ-Կինլէյ այնպէս լարված դրութեան մէջ է գտնվում խաղաղութեան դաշնագրին սենատի յամառ դիմադրութեան պատճառով, որ նրա առողջութիւնը խախտվել է: Միւս կողմից Մակ-Կինլէյի քարտուղարը հաղորդում է, որ նախագահը յօգնել է և պատերազմից առաջացած դըժուարութիւնների տակ ճնշվել է:

—Ներկայացուցիչների ժողովը Վաշինգտոնում քուէարկեց բիլլ, որով զէնքի կոչված զօրքի թիւը հասցրած է 100,000 հոգու:

—Ամերիկական սենատում դէմոկրատ Բէր խօսեց ընդարձակման և երկիրների միացման քաղաքականութեան դէմ: Նա հաստատում է, որ հազարաւոր ամերիկացիներ իրան համախոհ են և այն համոզմունքն ունեն, թէ մի այդպիսի քաղաքականութիւն սպառնում է ամերիկական շահերին:

—Ամերիկական լրագիրները հաղորդում են, որ գեներալ Օտիս հեռագրել է, որ Ագվինալդօ աշխատում է բանակցութիւններ սկսել ամերիկական զօրքերի գլխաւոր հրամանատարի հետ:

—«Voltaire» լրագրի խօսքով, Դրէյֆուս հրաժարվեց գրաւոր պատասխաններ տալ վճռաբեկ ատեանի հարցմունքներին: Նա պահանջում է, որ լսեն իր ցուցմունքները անձամբ Պարիզում:

—«Siècle» լրագիրը հաղորդում է, որ Վիկտոր Նապօլէօնի և մի քանի ֆրանսիական գեներալների մէջ այս օրերս կրկին խորհրդակցութիւն կայացաւ Բրիւսէլում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական ռէյխստագում պետական քարտուղար Պօզադովսկի,—«Русск. Вѣд.» լրագրի Բեռլինի թղթակցի խօսքով,—շատ ուրախացնող պատասխան տուեց կանանց իրաւունքների յայտնի պաշտպան իշխան Կարօլաթի հարցմունքին, թէ երբ, վերջապէս, կանանց կը թոյլ տան ինտելիգէնտ արհեստներով զբաղվել Գերմանիայում: Պրուսական և գերմանական միացած կառավարութիւնների մէջ, պետական քարտուղարի խօսքով, համաձայնութիւն կայացաւ թոյլ տալ կանանց բժշկական, ատամնաբուժական և դեղագործական պրակտիկա ունենալ: Դաշնակցական խորհուրդը այս ձմեռվայ ընթացքում կը հրատարակի կանոնադրութիւն, որով կանանց թոյլ կը տրվի քննութիւններ բռնել այն կանոնների հիման վրա, որոնք գոյութիւն ունեն տղամարդկանց համար: Դա կանանց շարժման առաջին յաղթութիւնն է Գերմանիայում, որը, երևի, նոր կողմնակիցներ ձեռք կը բերի և այն շրջաններում, որոնք մինչև այժմ թշնամաբար էին վերաբերվում կանանց գործունէութեան ընդարձակմանը:

Գերմանիայում, իր 53 միլիոն ազգաբնակութեամբ, հաշւում են, 25,178 բժիշկներ, այնպէս որ 2000 ազգաբնակութեան վրա միջին թւով գալիս է մէկ բժիշկ: Այդ հանգամանքը գանգատների առիթ չէր տայ, եթէ երիտասարդ բժիշկները չը ձգտէին մեծ քաղաքները գնալ, ուր յիրաւի մրցումը մեծ է և յաճախ անբարեխիղճ:

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի: Շաքարագործարանատէր Կէնիգ Պետերբուրգի ռաֆինադի գինը պակասեցրեց 10 կ. պուդից:

ԽԱՐԿՕՎ, 28 յունվարի: Տօնավաճառը կարելի է վերջացած համարել: Առևտուրը այնպէս էր, ինչպէս և անցեալ տարի: Վճարումները համեմատաբար լաւ էին: Ամենից լաւ ծախվում էին հում նիւթեր, շատ միջակ—բրդէ ապրանքներ:

ՍՕՖԻԱ, 28 յունվարի: Առաւօտեան, իշխանուհու մարմինը փոխադրվեց սգապատ վագոնը և յատուկ գնացքով ուղարկվեց Ֆիլիպպօպոլ: Ուղեկցում էին իշխանը, պրինց Լէօպոլդ, մինիստրները, պալատականները, բարձրաստիճան օֆիցէրները: Երեկոյեան ամենքը կը վերադառնան Սօֆիա:

ՊԱՐԻԶ, 28 յունվարի: Րէնօ Մօրլիէրի զեկուցումը Մազօի կատարած քննութեան դոկումէնտներով բաժանվեց պատգամաւորներին: Զեկուցումը մերժում է կառավարչական նախագիծը, որպէս պատահական օրէնք, որի օգուտները կասկածելի են, այն ինչ անյարմարութիւնները անկասկած են, որովհետև նա ցնցում է արդարադատութեան հիմքերը:

ԼՈՆԴՈՆ. 28 յունվարի: Համայնքների ժողով:

Գահական ճառի պատասխան ուղերձի վերաբերմամբ չարունակվող վիճաբանութիւնների ժամանակ, Աշմէդ Բարտլէտ առաջարկեց մի յաւելուած՝ պահանջելով ձեռք առնել չուտափոյթ և իրական միջոցներ Չինաստանը պաշտպանելու համար, պետութեան հողային անկախութիւնը պաշտպանելու համար, մանաւանդ Մանչուրիայի: Վալտօն ցանկանում է իմանալ, թէ արդեօք կառավարութիւնը քայլեր արել է, որպէս զի պէկին-խանկօուեան դաշնագրի մէջ մտցրած լինեն ամբողջապէս այն պայմանները, որոնց Ռուսաստանը ձեռք բերեց Չինաստանից կօնցէսիօնական դաշնագրի մէջ Նիւչվանեան գծի մասին,—նրա համար, որպէս զի ոչ մի պետութիւն չը կարողանայ միջամտել բրիտանական գործերում Եանցէ նահանգում:

ԼՕՆԴՕՆ, 28 յունվարի: Համայնքների ժողով: Երբուրգ ուրախութիւն է յայտնում, որ կառավարութիւնը աշխատում է Ռուսաստանի հետ համաձայնութիւն կայացնել Չինաստանի վերաբերմամբ: Բրօդրէկ խօսում է Աշմէդ Բարտլէտի յաւելուածի դէմ, որի միտքն է Չինաստանի ամբողջութեան երաշխաւորութիւնը որ և է պետութեան միջամտութեան դէմ: Կառավարութիւնը բացառական անհրաժեշտութիւն է համարում բրիտանական շահերի պաշտպանութիւնը Չինաստանում. բայց բրիտանական շահերի պաշտպանութիւնը, բրիտանական առևտրին օգնելը և բրիտանական ձգտումների աջողութիւնը չէ կարող իրագործվել այնպիսի ճառերով, որոնք թշնամութեան և մինչև անգամ ատելութեան ոգի ունեն դէպի ուրիշ պետութիւնները: Ամենից չատ տարածված էր այն գաղափարը, թէ Անգլիան դուրս կը քշվի Չինաստանից. բայց 1898 թւի յունվարից, իւրաքանչիւր ամիս, մենք ունէինք նոր կօնցէսիական և առևտրական աջողութիւններ: Չինաստանի համաձայնութիւնը Եանցէ հովտի վերաբերմամբ՝ անգլիական կառավարութիւնը համարում է ամենամեծ նշանակութիւն ունեցող գործ: Կառավարութիւնը մտադրութիւն ունի օֆիցէրների միջոցով չափումներ կատարել հովտում, նոյնպէս և հետազօտել՝ թէ ինչպիսի տարածութեան վրա հնարաւոր է նաւագնացութիւն: 14 նոր դաշնագրային նաւահանգիստներ արդէն բացված են կամ կը բացվեն մէկ երկու ամսվայ ընթացքում: Այս օրերս համաձայնութիւն ստացվեց Նանկինը բանալ, որով Անգլիան ազատ մուտք կունենայ դէպի ամբողջ արևմտեան գետը, մի քանի հարիւր մղոն տարածութեամբ: Բացի դրանից, Գերմանիայի և Ռուսաստանի գրաւած նաւահանգիստները բացված են, որպէս դաշնագրային նաւահանգիստներ: Երկաթուղիների մղոնների ընդհանուր գումարը, որի համար բրիտանական ընկերութիւնները կօնցէսիաներ են ստացել,—2,800 է, որոնց վրա ծախս հաշված է 20 միլիօն ֆունտ: Չը պէտք է զարմացնի, որ ցունգ-լի-եամէն հարկաւոր համարեց յայտնել, թէ մինչև որ այդ ճանապարհների շինութիւնը չը սկսվի, նա մտադրութիւն չունի ուրիշ կօնցէսիաներ տալ: Կատարելապէս համապատասխան է անգլիական կառավարութեան ցանկութիւններին, որպէս զի երկրի մի մասը ուրիշին չը յատկացնվի. բայց անգլիական կառավարութիւնը գործ ունի այնպիսի կառավարութեան հետ, որը մինչև անգամ չէ կարող պաշտպանել իր կալուածքների մի մասը: Ցամենայն դէպս, անգլիական կառավարութիւնը վճռել է պատրաստուր կերպով պաշտպանել բրիտանական շահերը, բրիտանական պրէստիժը: Էդվարդ Գրէյ խօսեց Ռուսաստանի հետ համաձայնութիւն կայացնելու օգտին: Նա յոյս ունի, որ երկու կառավարութիւններն էլ այն գիտակցութեան կը հասնեն, թէ այդպիսի համաձայնութիւն գլուխ բերելու համար պահանջվում է աւելի պարզասրտութիւն և ուղղամտութիւն: Բարտլէտի յաւելուածը ապա յետ վերցրվեց, և վիճաբանութիւնները յետաձգվեցին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 29 յունվարի: Վարշավայում հրատարակվող «Kurjer Poranny» լրագրի 26-րդ համարում, խմբագրութեան անուշադրութեան պատճառով, տպված են տեղեկութիւններ, որ իրեն՝ խմբագրութիւնը հանել էր, որպէս անյարմար հրատարակութեան համար: Ի նկատի ունենալով այդ, ներքին գործերի մինիստրը որոշեց արգելել Kurjer Poranny» լրագրի հատով ծախելը 10 օրով:

ՊԱՐԻԶ, 29 յունվարի: Պատգամաւորների մի խումբ, որոնց թւում—Դեկրէ, Բարտու, Պուանկարրէ, Բուրժուա, Բրիսսօն, Սարրիէն, Մէլինէր, Պէլտան, Միլլէրան, մի գրութիւն հրատարակեցին, որով յայտնում են թէ՝ կը դիմադրեն կառավարչական նախագծին՝ հանել Դրէյֆուսի գործը քրէական ատեանի իրաւասութիւնից: Այդ դատաւորների ազնւութիւնը կառավարութիւնը վկայել է պատգամաւորների ժողովի առաջ. քննութիւնից երևաց, որ բարդած մեղադրանքները իրենուրոյն չեն: Գործը հանել քրէական ատեանի իրաւասութիւնից՝ կը նշանակէր արդարադատութիւնը գցել դիֆամացիայի իշխանութեան տակ: Այդպիսի օրէնք բռնութիւն կը լինէր և համաձայնութիւն չէր վերականգնի մի այնպիսի վայրկենում, երբ հանրապետական միութիւնը անհրաժեշտութիւն է դառնում՝ աչքի առաջ ունենալով կղերական-ցեզարական միութիւնը:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատար.՝ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԺԱՌԱՆԳՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզաւոր. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—1¼—2¼ ժ. ներքին և միատեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՕՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (ելեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոչրադիտական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն:
Վճար 50 կ. չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
86—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Նոր լոյս են տեսել

Ր. Կ.
ԿՂԶԻՆԵՐԻ ԼՕՐԴԸ Վալտեր Սկօտի Թարգմ. Ց. Միրզոյեանի . . . . 1 —
ՀԱՆՐԻԷՏ, Ֆ. Կօպպէի, Թարգմ. ֆրանսերէնից. Ռ. Խ. . . . . — 35
ՊԱՍԿԱԼ, Թարգմ. Գ. Բաղր. . . . — 20

Դիմել՝ Тифлисъ. Тифлисское Общество Изданія Армянскихъ книгъ. կամ՝ Tiflis, Société de la publication des livres armeniens.
3—6

ԲԺ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ
ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐ՝
մասնագիտաբար քթի, կոկորդի, քթի և ականջի հիւանդութիւններով:
Առաւօտեան 9—11 ժ.
Երեկոյեան 4—7 ժ.
Գօլօվինսկի պրօսպ. № 28, տ. Աղամօվի:
9—15

Լոյս տեսաւ
Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆՑԻ
ԲԱՇՕՆ
(Պատկեր)
Գինն է 5 կօպ.
Դիմել—Թիֆլիսում, Զաքարիա Գրիգորեանցի «Կովկասեան գրավաճառանոցը» և Տէր-Սարգսեանի խանութը, Վօրօնցօվի արձանի դիմաց:
2—5

Կովկասի ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ գրադարան-ընթերցարանը
(Միջին փողոց, տ. Տէր-Աստուածօվի, Ալեքսանդեանի մագազինի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9: Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը: Մուտքը 2 կօպ., ամսավ 40 կ. աշակերտներից կէս վճար:
3—50

Կիրակի, յունվարի 31-ին
Թիֆլիսի Արտիստական ընկերութեան դահլիճում
Ցօղուտ
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
սիրողների մասնակցութեամբ, լինելու է ներկայացում՝ կօնցերտով: Խաղալու են

I
ԲԺՇԿԻ ՄՕՏ
Վօդեվիլ մէկ գործողութեամբ, հեղինակութիւն Շչեգլօվի:

II
ՎՈՒՅ ՔԻ ԻՄ ՎԵՋԵՐ
Վօդեվիլ երկու պատկերով, հեղինակութիւն Տէր-Գրիգորեանցի:

Մասնակցում են օր.օր. իշխ. Ս. Արղութեան, Մ. Ղօրղանեան, Տ. Միրիմանեան, Մ. Ալիբէգեան, Ն. Աբխազովեան, պ.պ. Պ. Ալիբէգեան, պ. Փրիդօնեան, Գ. Միրաղեան, Ս. Ծուլինեան, Ա. Քալանթարեան, Ի. Դօլուխանեան, Ա. Բունաթեան:

III
ԿՕՆՑԷՐՏ
Մասնակցութեամբ օր.օր. Անանեանցի, իշխ. Մ. Բեհբութեանցի; Ե. Իզմիրեանցի, Տ. Միրիմանեանցի և պ. Ի. Դօլուխանեանցի: Կօնցերտից յետոյ լինելու են ՊԱՐԵՐ:
Սկիզբն է 8 ժամին:
Տօմսակները վաղօրօք կարելի է ստանալ Ընկերութեան գրասենեակում (Լօրիս-Մէլիքօվսկեա փողոց, տուն № 13), իսկ ներկայացման օրը՝ Արտիստական ընկերութեան մէջ՝ սկսած երեկոյեան 6 ժամից: 4—4

ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ, ԹԻՖԼԻՍ
Վաճառվում են հետևեալ նոր գրքերը.

Ր. Կ.
ՕՐԱՑՈՅՑ Ս. Էջմիածնայ, 1899 թ. փակազմ . . . . — 20
ՍՈՒՆԴՈՒԿԵԱՆՑ Գ. Ամուսիններ. կօմեդիա հինգ արարուածով, երկ. տպագրութիւն (փոփոխած) . 1 —
ՍԵԴՐԱԿԵԱՆ Ար. եպիս. Յովհաննէս եպիսկոպոս Շահխաթունեանի կենսագրութիւնը. Պ. 1898 թ. . 1 —
КНЕЙПЪ. Мое водолеченіе К. 1898 . 1 —
ГЛОДЗИНСКІЙ Методъ Кройки верхняго дамскаго и дѣтскаго платья, изд. 18. 1898 . . . . . 6 50
БАЗАРОВЪ Метода Кройки верхняго и дамскаго платья, СПБ. 1887 . 3 —
ՍՕԼՕՎԵԱՆ—Կոտրված սիրտ, վէպ 1898. — 40
» Ղօնաղլուղս մնաց—վօդըվիլ. — 20
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Центральная Книжная Торговля. (շ.) 7—10

ԿԱՖԷ ՉԻԼԼԷՐ
(Café Siller)
Վիեննա, I. Laurenzerberg. Մեծ և էլեգանտ կաֆէ, բազմաթիւ հայ և ռուս լրագիրներով. գալիս են բոլոր հայ և շատ օտարականներ: Ընտիր սուրճ և լաւ ծառայութիւն: 8—25

ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
կար ու ձևի դպրոցում ԼՈՒՍԱՅԱՆՈՅԻ դասընթացը արդէն սկսված է: Ընդունելութիւնները շարունակվում են: Գանօվսկայա, № 25: 4—10

ОТЪ ГОСУДАРСТВЕННАГО БАНКА ОБЪЯВЛЕНІЕ.
Государственный Банкъ доводитъ до всеобщаго свѣдѣнія, что въ исполненіе ВЫСОЧАЙШАГО повелѣнія, послѣдовавшаго 18 Декабря 1898 г. и опубликованнаго въ № 1 Сборника узаконеній и распоряженій Правительства 1899 г., срокомъ для окончательнаго обмѣна Государственнымъ Банкомъ оставшихся въ обращеніи металлическихъ депозитныхъ квитанцій назначено 31 Декабря 1899 г., послѣ котораго непредъявленныя къ оплатѣ квитанціи лишаются платежной силы.

Управляющій Плеске 2—3

ՆՕՏԱՐ
ԼԵՒԱՆ ՅԱԿՈՎԲԵԱՆ ՄՂԵԲՐԵԱՆԻ
գրասենեակը բաց է և գտնվում է 4-րդ քաղաքամասում, Երևանեան հրապարակի և Գանօվսկայա փողոցի անկիւնում, Գուրգենօվի տանը, № 2, քաղաքային տան կողքին, Թամամշեանի քարավանսարայի դիմաց: Տելեֆօն 126.

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ և ԸՆԿ.
Կանօնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքչաբթի օրերը, երկու չաբաթը մի անգամ, սկսած յունվարի 25/6-ի չորեքչաբթիից,
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսօն և Պօլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքչաբթի, 3/15 փետրվարի, ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս չարունակաբար, երկու չաբաթը մի անգամ, չորեքչաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից պակաս գներով:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին՝
ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արնօին, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկենցանեանին, Սիօնի փող. Խօջափարուխօվի և Մայսուրաձէ քարվանսարա: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիլդարեանին, Կօլուբրակինսկայա հրապարակ: ՆՕՎՕՐՕՍՍԻՅՍԿ—պ. Մելխիօր Հերշենրօդերին:
(ե. հ. շ.) 13—20

Открыта подписка на 1899 годъ
НА ЕЖЕНЕДѢЛЬНУЮ ГАЗЕТУ
„АВКАЗСКОЕ СЕЛЬСКОЕ ХОЗЯЙСТВО".
органъ Императорскаго Кавказскаго общества сельскаго хозяйства. Газета выходитъ по четвергамъ, безъ предварительной цензуры,
ПО СЛѢДУЮЩЕЙ ПРОГРАММѢ:

1. Руководящія статьи по техническимъ и экономическимъ вопросамъ сельскаго хозяйства Кавказа. 2. Популярныя статьи (оригинальныя и переводныя) по полеводству, молочному хозяйству, садоводству, виноградарству и виноделію, шелководству, лѣсоводству, техническимъ производствамъ и проч. 3. Хроника и корреснонденціи. 4. Отчеты хозяевъ о произведеныхъ ими въ своихъ хозяйствахъ опытахъ и наблюденіяхъ. 5. Обзоры литературы, русской и иностранной, по вопросамъ, относящимся къ Кавказу. 6. Сельско-хозяйственныя статистическія и рыночныя свѣдѣнія о производствѣ и потребленіи сельско-хоз. продуктовъ, о видахъ на урожай, о цѣнахъ на продукты; тарифы. 7. Правительственныя распоряженія 8. Протоколы, доклады и отчеты общества и его органовъ. 9. Критика и библіографія. 10. Вопросы и отвѣты. 11. Сельско-хозяйственный календарь. 12. Домоводство. 13. Справочный указатель. 14. Смѣсь. 15. Метеорологическія наблюденія. 16. Объявленія.

ЗАДАЧА ГАЗЕТЫ заключается въ установленіи болѣе живой и тѣсной связи между обществомъ сельскаго хозяйства и хозяевами Кавказа, съ цѣлью, во первыхъ, совмѣстной разработки сельско-хозяйственныхъ вопросовъ Кавказа и во вторыхъ, распространенія среди населенія необходимыхъ сельско-хозяйственныхъ знаній.

Въ отдѣлѣ „Вопросы и отвѣты" газета, при содѣйствіи спеціалистовъ, будетъ своевременно давать хозяевамъ отвѣты на тѣ вопросы, съ которыми они будутъ обращаться въ редакцію или общество сельскаго хозяйства.

Подписная цѣна съ доставкой и пересылкой: на годъ—*4* руб., полгода—*2* руб., ¼ года—*1* руб. и 1 мѣсяцъ—*40* к.

Подписка принимается въ Тифлисѣ въ бюро Импер. Кавк. общ. сел. хоз., Барятинская ул., собственный домъ.

3—3 Отвѣтственный редакторъ *А. А. Калантаръ*.